



Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն,
375014, Երևան, Ազատության պող. 26,
Հեռ: (3741) 28 81 92 · Ֆաքս: (3749) 28 13 80
Էլ. փոստ: gmanas@nfsat.am



ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ

1530 Wilson Blvd, Suite 300,
Arlington, VA 22209
Հեռ: (703) 526-9720 · Ֆաքս (703) 526-9721
Էլ. փոստ: armenia@crdf.org

**Գիտության և Առաջատար Տեխնոլոգիաների Ազգային Հիմնադրամ (ԳԱՏԱՀ)
և**

ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ (ՔՀՄՀ)

Հայ-ամերիկյան «Երկկողմանի հետազոտական շնորհներ-2005»

I. Ներածություն և համառոտ ներկայացում

Գիտության և Առաջատար Տեխնոլոգիաների Ազգային Հիմնադրամը (ԳԱՏԱՀ) և ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ) հայտարարում են հայ-ամերիկյան «Երկկողմանի հետազոտական շնորհներ-2005» չորրորդ մրցույթը (BGP-IV):

Մրցույթի երեք հիմնական նպատակներն են՝ աջակցել միջազգային չափանիշներին համապատասխանող հայ-ամերիկյան համատեղ հետազոտությունների և մշակումների իրականացմանը, նպաստել հայ գիտաշխատողների արտահոսքի կանխման, ինչպես նաև նախկին ռազմական նշանակության հետազոտությունների ոլորտի հետազոտողներին քաղաքացիական բնույթի հետազոտությունների ոլորտում լիարժեք ներգրավվելու գործընթացներին:

Նախագծերի գիտական արժանիքներից կախված աջակցություն է տրամադրվելու համատեղ հայ-ամերիկյան հետազոտական խմբերի 18-ից 24 ամիս տևողությամբ քաղաքացիական բնույթի բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառների հետազոտական աշխատանքների իրականացման համար (տե'ս Հավելված 1):

ԳԱՏԱՀ-ը և ՔՀՄՀ-ն առաջնահերթություն են տալու այն հայտերին, որոնց մեջ ընդգրկված կլինեն ինչպես անցյալում ռազմական նշանակության հետազոտություններում ներգրավված, այնպես էլ երիտասարդ, այդ թվում ասպիրանտ կամ ուսանող հետազոտողները, վերջին վեց տարիների ընթացքում գիտական կոչում ստացած, ինչպես նաև Երևանից դուրս տեղաբաշխված գիտական կազմակերպությունները ներկայացնող գիտաշխատողները:

- Բոլոր դրամաշնորհները պետք է ունենան հայ-ամերիկյան համագործության բնույթ:
- Հայկական գիտախմբի բոլոր մասնակիցները, ներառյալ ղեկավարը պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ մշտական բնակիչներ, որոնք դրամաշնորհի ամբողջ ընթացքում պետք է բնակվեն Հայաստանում: Ամերիկյան կողմի ղեկավարը պետք է հանդիսանա ԱՄՆ քաղաքացի կամ մշտական բնակիչ և դրամաշնորհի ամբողջ ընթացքում բնակվի ԱՄՆ-ում:

- Դիմորդները կարող են հայցել մինչև 30 հազ. ԱՄՆ դոլար 18-ից 24 ամիս ժամանակահատվածի համար: Նախագծի ընդհանուր գումարի առնվազն 80%-ը պետք է նախատեսված լինի հայ գիտախմբի համար, իսկ ԱՄՆ գիտախմբի համար՝ առավելագույնը 20%:
- Դիմորդները պետք է ներկայացնեն հայտի անգլերեն և հայերեն (կամ ռուսերեն) տարբերակները, ինչպես նաև հայտի անգլերեն և հայերեն (կամ ռուսերեն) էլեկտրոնային տարբերակները ԳԱՏԱՀ-ին և ՔՀՄՀ-ին:
- Բացատրական կամ պարզաբանման նպատակներով սույն «Ծրագրի Հայտարարությունը» կարող է անգլերենից թարգմանվել նաև այլ լեզուների: Այդպիսի թարգմանությունների առկայության դեպքում անգլերեն տարբերակը պետք է հիմք հանդիսանա սույն «Հայտարարության» ցանկացած կետի մեկնաբանման համար:

Մրցույթին մասնակցելու հայտերը ԳԱՏԱՀ և ԱՄՆ ՔՀՄՀ ներկայացնելու վերջին ժամ-կետը 2005թ. մայիսի 16-ն է՝ ժամը 18:00 (Հայաստանի և ԱՄՆ տեղական ժամանակով):

Մրցույթի արդյունքները նախատեսվում է հայտարարել 2005թ-ի նոյեմբերի 1-ին:

ԳԱՏԱՀ-ի և ՔՀՄՀ-ի բոլոր որոշումները վերջնական են:

II. Տեղեկություններ ԳԱՏԱՀ-ի մասին

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1997թ-ին: ԳԱՏԱՀ-ի առաքելությունն է աջակցել Հայաստանում իրականացվող գիտական հետազոտությունների իրականացմանն ու գիտական համակարգի տեխնիկական հնարավորությունների զարգացմանը՝ մրցութային հիմունքներով հետազոտական և տեխնիկական միջոցների, դրամաշնորհների տրամադրման և դասընթացների կազմակերպման միջոցով:

ԳԱՏԱՀ-ի նպատակներն են՝

- ♦ Նպաստել գիտության տարբեր բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի Հանրապետության գիտական և ճարտարագիտական ներուժը:
- ♦ Ֆինանսական և տեխնոլոգիական աջակցություն ցուցաբերել գիտական հետազոտությունների և նախագծի զարգացման համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

ԳԱՏԱՀ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելել <http://www.nfsat.am>:

III. Տեղեկություններ ՔՀՄՀ-ի մասին

ԱՄՆ Քաղաքացիական մշակումների և հետազոտությունների հիմնադրամը (ՔՀՄՀ) ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 1995թ-ին՝ ԱՄՆ կառավարության կողմից՝ նպաստելու միջազգային գիտական և տեխնիկական համագործակցությանը: ՔՀՄՀ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելել <http://www.crdf.org> :

ՔՀՄՀ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն քաղաքացիական նպատակների իրագործմանը և իրականացվեն քաղաքացիական միջավայրում:

Սույն ծրագրի համար ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից:

IV. Ծրագրի ուղեցույց

Ա. Ընդհանուր դրույթներ: Սույն մրցույթի շրջանակներում 18-24 ամիս ժամանակահատվածով տրամադրվող դրամաշնորհի առավելագույն գումարը կազմում է 30հազ. ԱՄՆ դոլար: Յուրաքանչյուր նախագծին շնորհվող միջոցների առնվազն 80%-ը պետք է օգտագործվի հետազոտական խմբի հայկական կողմին անհրաժեշտ ծախսերի համար, որն իր մեջ ներառում է հայկական կազմակերպությանը տրամադրվող աջակցությունը: Ամերիկյան կողմի ծախսերի համար կարող է հատկացվել առավելագույնը ընդհանուր գումարի 20%-ը: ՔՀՄՀ-ն և ԳԱՏԱՀ-ը ողջունելի են համարում փոխադարձ այցելությունները նախագիծը իրականացնելու ընթացքում՝ հայկական գիտախմբի որևէ մասնակցի այցելությունը ԱՄՆ գիտախմբի լաբորատորիան, իսկ ամերիկյան կողմի որևէ մասնակցի այցելությունը հայկական գիտախմբի լաբորատորիան:

Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2005թ. մայիսի 16-ը՝ ժամը 18:00-ը: Դիմորդները պետք է իրենց հայտերը ներկայացնեն ինչպես ԳՍՍԱՀ, այնպես էլ ՔՀՄՀ: Հայտերի ներ-կայացման հետ կապված մանրամասն տեղեկությունները ներկայացված են ստորև՝ Բաժին (IV)(Զ)-ում:

Բ. Մասնակցության իրավունքը: Հայ-ամերիկյան երկկողմանի հետազոտական շնորհների ծրագրի շրջանակներում ներկայացվող բոլոր հայտերը պետք է ընդգրկեն մեկ հայ գիտախմբի ղեկավար և մեկ ամերիկյան գիտախմբի ղեկավար, որոնք էլ կրում են նախագծի հիմնական պատասխանատվությունը յուրաքանչյուրն իր երկրում՝ համակարգելով մասնակցող բոլոր անդամներին և կազմակերպություններին: Բոլոր հայտերը պետք է համապատասխանեն մասնակցության համար պահանջվող հետևյալ պահանջներին՝

- 1) Գիտախմբի յուրաքանչյուր ղեկավար պետք է՝
 - ա) Ունենա գիտությունների թեկնածուի կամ դոկտորի աստիճան (կամ դրանց համարժեք կոչում),
 - բ) Ունենա առնվազն հինգ գիտական հոդված համապատասխան գրականության մեջ (երեք հոդված, եթե դիմորդը իր գիտական կոչումը ստացել է վերջին վեց տարիների ընթացքում);
 - գ) Լրիվ դրույքով աշխատի քաղաքացիական հետազոտությունների ոլորտում:
- 2) Հայկական գիտախմբի ղեկավարն ու անդամները պետք է հանդիսանան Հայաստանի քաղաքացիներ կամ մշտական բնակիչներ և դրամաշնորհի ընթացքում բնակվեն Հայաստանում:
- 3) ԱՄՆ գիտախմբի ղեկավարը պետք է հանդիսանա ԱՄՆ քաղաքացի կամ մշտական բնակիչ և դրամաշնորհի ընթացքում բնակվի ԱՄՆ-ում:
- 4) Բոլոր նախագծերը պետք է ունենան քաղաքացիական բնույթ, չհետապնդեն ռազմական նպատակներ և իրականացվեն քաղաքացիական հետազոտությունների պայմաններում:
- 5) Նախագծերը կարող են լինել ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների և ճարտարագիտական բնագավառներից՝ ներառյալ տեխնոլոգիական մշակումները, որը մաս է կազմում առևտրային նշանակության ակնկալիքով նորարարական գործընթացի: Նախագծերը կարող են նվիրված լինել ճարտարագիտական գործընթացի կամ փորձանմուշի մշակմանը, բայց ոչ առևտրային արտադրության կամ առևտրայնացման խնդիրներին:
- 6) Սույն ծրագրի շրջանակներում ներկայացված հայտերում յուրաքանչյուր անհատ կարող է հանդես գալ որպես միայն մեկ **Նախագծի Ղեկավար**:
- 7) Յուրաքանչյուր հայտ գնահատվելու է առանձին և անկախ, հետևաբար այն չպետք է սույն ծրագրի շրջանակներում ներկայացվող այլ հայտերի մաս կազմի կամ դրանցից որևէ կերպ կախված լինի:
- 8) ԳՍՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն որպես կանոն չեն խրախուսում Նախագծի Ղեկավարի կազմակերպության «վարչական վերադասի» ընդգրկումը հայտում՝ անհատական ֆինանսական աջակցություն պահանջող որևէ դեբտով: «Վարչական վերադասի» մանրամասն սահմանման, ինչպես նաև այս հարցի հետ առնչվող այլ տեղեկությունների համար տե՛ս ստորև ներկայացված Բաժին (V)(1)(f)-ում:
- 9) Ամերիկյան կամ հայկական կողմի ղեկավարները, որոնք ներկայումս մասնակցում են ՔՀՄՀ-ի կամ ԳՍՍԱՀ-ի այլ ծրագրերում կարող են դիմել այս ծրագրին ևս: Եթե ծրագրին ներկայացվող հայտը դրամաշնորհի արժանանա, այսպիսի մասնակիցները կարող են անհատական ֆինանսական աջակցություն ստանալ այդ բոլոր դրամաշնորհների շրջանակներում, սակայն պետք է երաշխավորեն, որ ՔՀՄՀ-ի կամ ԳՍՍԱՀ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր նախագծերին հատկացված ժամանակը չի գերազանցելու իրենց ընդհանուր ժամանակի 100%-ը, ինչպես նշված է շնորհի հետ կապված փաստաթղթերում:

- 10) Ամերիկյան կամ հայկական կողմերի ղեկավարները, որոնք նախկինում մասնակցել են ՔՀՄՀ-ի կամ ԳՄՍԱՀ-ի ավարտված դրամաշնորհներում, իրավունք ունեն դիմել այս ծրագրին ևս: Այսպիսի մասնակիցները պետք է ժամանակին հանձնած լինեն բոլոր հաշվետվությունները՝ ներառյալ նախագծի վերջնական հաշվետվությունները: Հնարավոր է, որ ՔՀՄՀ-ի և ԳՄՍԱՀ-ի այն շնորհառուներին, որոնք ժամանակին պատշաճ կերպով չէին հանձնել բոլոր հաշվետվությունները, **իրավունք չստվի** մասնակցել սույն ծրագրում:
- 11) ՔՀՄՀ-ն ենթարկվում է էքսպորտի վերահսկմանը և նման ծրագրերում արտասահմանյան կազմակերպությունների մասնակցությանը վերաբերող ԱՄՆ-ի կառավարության կողմից սահմանված բոլոր կանոններին և օրենքներին: Ըստ ՔՀՄՀ-ի քաղաքականության՝ ԱՄՆ-ի կառավարության կողմից սահմանափակված անձանց կամ կազմակերպությունների հետ ոչ մի տեսակի գործարք չի կարող նախաձեռնվել առանց դրա համար ԱՄՆ կառավարության կողմից համապատասխան հատուկ լիազորման:
- 12) ԳՄՍԱՀ-ը ենթարկվում է Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոններին:
- 13) ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն իրավունք են վերապահում սահմանափակել իրենց ծրագրերում ցանկացած անձի կամ կազմակերպության մասնակցության իրավունքը:
- 14) ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն ենթարկվում են մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների և մշակումների հետ կապված բոլոր ԱՄՆ օրենքներին և կանոններին: Այն դիմորդները, որոնք մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների հայտեր են ներկայացնում, պետք է ծանոթանան Բաժին (IV)(Ժ)-ի հետ:

Գ. Նախկինում ռազմական նշանակության հետազոտությունների ոլորտում ընդգրկված գիտաշխատողներ: ՔՀՄՀ-ն և ԳՄՍԱՀ-ը ցանկալի են համարում, որ նախկինում ռազմական նշանակության հետազոտությունների, հատկապես զանգվածային ոչնչացման զենքի արտադրության ոլորտում ներգրավված հայ գիտաշխատողները լրիվ դրույքով մասնակցեն սույն ծրագրի շրջանակներում հովանավորվող քաղաքացիական հետազոտությունների նախագծում: ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն հատուկ ուշադրություն կհատկացնեն սույն ծրագրի մրցույթին ներկայացված այն հայտերին, որտեղ լրիվ դրույքով ընդգրկված կլինեն նախկինում ռազմական նշանակության հետազոտությունների բնագավառում ներգրավված գիտնականներն ու ճարտարագետները, որոնք ներկայումս աշխատում են քաղաքացիական հետազոտությունների ոլորտում: Նախկինում ռազմական բնույթի գիտահետազոտական փորձ ունեցող մասնակիցները պետք է նկարագրեն իրենց աշխատանքային փորձը իրենց հայտի «Ա» և «Բ» ձևերում՝ ըստ սույն ծրագրի հայտարարության մեջ ընդգրկված Հավելված 2-ի նախկին խորհրդային ռազմական գիտաշխատողների ծածկագրերի ցանկի:

Դ. Ամերիկյան առևտրային կազմակերպություններից մասնակիցներին վերաբերող ցուցումներ: ԱՄՆ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ հանդիսացող անհատները նախքան հայ-ամերիկյան երկկողմանի հետազոտական ծրագրին դիմելը պետք է ծանոթանան ՔՀՄՀ-ի արդյունաբերական ծրագրերի հետ: Արդյունաբերական այդ ծրագրերը աջակցություն են ցուցաբերում համագործակցական հետազոտական ծրագրերին, որոնց նպատակն է նպաստել հետազոտությունների արդյունքների կիրառմանը՝ դրանց առևտրայնացման տեսակետից: Այն հայտերը, որոնք կպարունակեն տեխնոլոգիաների առևտրայնացմանը վերաբերող նախագծեր, որոնք ավելի շատ համապատասխանում են Արդյունաբերական Ծրագրերին, ՔՀՄՀ-ի և ԳՄՍԱՀ-ի կողմից հայ-ամերիկյան երկկողմանի հետազոտական ծրագրի շրջանակներում չեն ուսումնասիրվելու: Արդյունաբերական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ՔՀՄՀ-ի ինտերնետային էջից (<http://www.crdf.org/Industry/industrymain.html>) կամ դիմել ՔՀՄՀ-ի աշխատակազմին: firststeps@crdf.org կամ nextsteps@crdf.org էլեկտրոնային հասցեներով:

Այն հայտերը, որոնք կունենան բացարձակապես ոչ առևտրային հետազոտական նախագծեր և որոնց մասնակցություն կունենան ամերիկյան որևէ առևտրային կազմակերպության ներկայացուցիչ, կարող են

մասնակցել հայ-ամերիկյան երկկողմանի հետազոտական ծրագրի մրցույթին, սակայն այդ դեպքում ամերիկյան կողմը (առևտրային կազմակերպությունը) ՔՀՄՀ-ից և ԳԱՏԱՀ-ից չի կարող ակնկալել որևէ ֆինանսական աջակցություն: Ավելին, առևտրային կազմակերպությունը պետք է համաձայնի նախագծին աջակցություն ցուցաբերել: Այդ աջակցությունը պետք է բաղկացած լինի երկու մասից՝

- 1) Ամերիկյան առևտրային կազմակերպությունը վճարում է ամերիկյան կողմի բոլոր ծախսերը;
- 2) Ամերիկյան առևտրային կազմակերպությունը կատարում է ֆինանսական կամ նյութական այլ տեսակի ներդրում՝ հայկական կողմի ծախսերի առնվազն 10%-ի չափով:

Աջակցության երկու բաղադրիչներն էլ պետք է մանրամասն ներկայացված լինեն հայտի բյուջեի նկարագրության մեջ: Ցանկալի է, որ նախքան հայտ ներկայացնելը ամերիկյան առևտրային կազմակերպությունները կապվեն ՔՀՄՀ-ի հետ իրենց մասնակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ բոլոր օրենքներին և կանոններին ճիշտ համապատասխանելու համար: Ամերիկյան առևտրային կազմակերպությունը պետք է ներկայացնի պարտավորվածության նամակ, որը պետք է կցվի հայտին: ՔՀՄՀ էլեկտրոնային հայտեր ներկայացնելիս դիմորդները պետք է հաստատեն, որ համապատասխան բոլոր փաստաթղթերը առկա են: Դիմորդները պետք է այդ նյութերը ներկայացնեն առանձին փաստաթղթերի տեսքով՝ ի լրումն հայտին: Նշված լրացուցիչ տեղեկությունները չներկայացնելու դեպքում հայտը կարող է համարվել անվավեր:

Ե. Հայկական առևտրային կազմակերպությունները չեն կարող հանդիսանալ այս մրցույթին ներկայացվող հայտերի հայկական կողմ: Համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող «Բարեգործության Օրենք»-ի՝ ԳԱՏԱՀ-ը իրավունք չունի անհատույց ֆինանսական աջակցություն ցուցաբերել առևտրային կազմակերպություններին: Ոչ առևտրային կազմակերպություններից ներկայացվող հայտերը, որոնք իրենց հայտերում նախատեսում են հայկական առևտրային կազմակերպության մասնակցությունը, պետք է դիմեն ԳԱՏԱՀ՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:

Զ. Ցուցումներ հայտը ներկայացնելու վերաբերյալ: Դիմորդները պետք է հայտերը ներկայացնեն ինչպես ԳԱՏԱՀ, այնպես էլ ՔՀՄՀ մինչև 2005թ. մայիսի 16-ը՝ տեղական ժամանակով ոչ ուշ քան ժամը 18:00-ը: Այն հայտերը, որոնք կներկայացվեն ԳԱՏԱՀ և ՔՀՄՀ ոչ այնպես, ինչպես նշված է ստորև, կհամարվեն անվավեր:

- 1) **Լրացված հայտերը պետք է ներկայացվեն ԳԱՏԱՀ մինչև 2005թ. մայիսի 16-ը՝ ժամը 18:00-ը, հետևյալ կերպ՝**
 - **Հայտի մեկական օրինակ անգլերեն և հայերեն (կամ ռուսերեն) լեզուներով (թղթի վրա), և մեկական էլեկտրոնային օրինակ անգլերեն և հայերեն (կամ ռուսերեն)՝ տառերի սովորական չափսով:**

ԳԱՏԱՀ-ը չի ընդունելու ֆաքսով ուղարկված դիմումներ: ԳԱՏԱՀ ներկայացվող թղթի վրա հայտերը պետք է տիտղոսաթերթում («Ձև-Ա») պարունակեն հայկական կողմի դե-կավարի և հայկական կազմակերպության ներկայացուցչի բնօրինակ ստորագրությունները: ԳԱՏԱՀ-ը հաստատելու է հայտերի ընդունումը՝ հայկական և ամերիկյան կողմի ղեկավարներին էլեկտրոնային նամակներ ուղարկելով:

ԳԱՏԱՀ-ին ներկայացվող հայտերը պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով՝

Հայաստանի Հանրապետություն,

Երևան-14, Ազատության 26,

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ (ԳԱՏԱՀ)

Հեռ: (3741) 28 81 92

Ֆաքս: (3741) 28 13 80

Էլ. փոստ: gmanas@nfsat.am

2) Լրացված հայտերը պետք է ներկայացվեն ԱՄՆ ՔՀՄՀ մինչև 2005թ. մայիսի 16-ը՝ ժամը 18:00-ը, հետևյալ կերպ՝

- Հայտի մեկ էլեկտրոնային տարբերակ անգլերեն լեզվով, որը պետք է ներկայացվի ՔՀՄՀ-ի ինտերնետային էջի միջոցով՝

<http://www.crdf.org/ApplicationForms/apps.html>

ԱՄՆ ՔՀՄՀ հայտերը կարող են ներկայացվել նշված ինտերնետային էջի միջոցով ցանկացած ժամանակ՝ 2005թ. ապրիլի 1-ից մայիսի 16-ը: Հայտերը պետք է ներկայացնել միայն ՄԵԿ անգամ և միայն նախագծի ՄԵԿ ղեկավարի կողմից: Հայ և ամերիկյան ղեկավարները պետք է միասին պատրաստեն հայտը և ձեռք բերեն հայկական և ամերիկյան կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչների հաստատումը: Երբ հայտի վերջնական տարբերակը պատրաստ լինի, նրանք պետք է որոշեն, թե նախածի ղեկավարներից ո՞վ է հայտը ներկայացնելու ՔՀՄՀ-ին՝ էլեկտրոնային եղանակով նշված ինտերնետային էջի միջոցով: Հայտի էլեկտրոնային տարբերակը կարող է ներկայացվել միայն ՄԵԿ անգամ: Հայտը էլեկտրոնային եղանակով ներկայացնելուց հետո ամերիկյան և հայկական կողմի ղեկավարները, ինչպես նաև հայկական և ամերիկյան կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները կստանան ավտոմատ հաստատման հաղորդագրություն: Հայտի էլեկտրոնային տարբերակի ներկայացման հետ կապված լրացուցիչ տեղեկությունները կարելի է ստանալ՝ այցելելով ՔՀՄՀ-ի ինտերնետային էջը: Հարկ չկա ուղարկել հայտի բնօրինակը:

ԳՄՍԱՀ և ՔՀՄՀ հայտը ներկայացվելու պահին այն պետք է ավարտուն լինի: Ցանկացած հայտ, որը չի պարունակի պահանջվող բոլոր բաղադրիչները, ինչպես նշված է Բաժին (IV)(Թ)-ում, կհամարվի անվավեր: Հայտը ԳՄՍԱՀ-ի և ՔՀՄՀ-ի կողմից ընդունվելուց հետո դրա մեջ ոչ մի փոփոխություն չի կարող մտցվել: Ինչևէ, հայտը ներկայացնելուց հետո հանգամանքների կտրուկ փոփոխման դեպքում, եթե նախագիծը հնարավոր չէ իրականացնել այնպես, ինչպես առաջարկվում էր հայտում, նախագծի ղեկավարները պետք է դրա մասին տեղյակ պահեն ԳՄՍԱՀ-ին և ՔՀՄՀ-ին և հայտնեն, որ հայտը ետ են կանչում մրցույթից:

Է. Հայտերի փորձաքննությունը: ԳՄՍԱՀ և ՔՀՄՀ ներկայացվելուց հետո բոլոր հայտերը ենթարկվելու են մանրակրկիտ ստուգման դրանց համարվածության և վավերության տեսակետից: Գիտական փորձաքննության գործընթացում ՔՀՄՀ-ի դերը կայանում է հայտերի համար ամերիկյան մասնագետ փորձագետների կողմից փորձաքննություն կազմակերպելու մեջ: Մինևույն ժամանակ ԳՄՍԱՀ-ը կազմակերպելու է գիտական անկախ փորձաքննություն հայ (և, անհրաժեշտության դեպքում, նաև արտասահմանյան) մասնագետների միջոցով: Հայտերը գնահատելու և ֆինանսավորման երաշխավորելու համար ՔՀՄՀ-ի և ԳՄՍԱՀ-ի փորձագետները օգտվելու են Բաժին (IV)(Ը)-ում ներկայացված գնահատման չափանիշներից: Փորձաքննության արդյունքների և վերը շարադրված ԳՄՍԱՀ-ի և ՔՀՄՀ-ի նախապատվությունների հիման վրա ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն համատեղ կընտրեն այն հայտերը, որոնք արժանանալու են դրամաշնորհի: ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն նախատեսում են հայտարարել ֆինանսավորման համար ընտրված հայտերը 2005թ-ի նոյեմբերի 1-ին:

ԳՄՍԱՀ-ի և ՔՀՄՀ-ի բոլոր որոշումները վերջնական են:

Ը. Գնահատման չափանիշներ: Հայտերը ենթարկվելու են գիտական անկախ փորձաքննության և գնահատման իրարից անկախ ԳՄՍԱՀ-ի և ՔՀՄՀ-ի կողմից նշանակված փորձագետների կողմից: Փորձագետները այս ծրագրի համար ներկայացված հայտերի գնահատման համար օգտագործելու են հետևյալ չափանիշները: Առաջին երկուսը հանդիսանում են ՔՀՄՀ-ի և ԳՄՍԱՀ-ի կողմից ընդունված ամենակարևոր չափանիշները, որոնց պետք է համապատասխանեն բոլոր հայտերը, մնացած չորսը՝ լրացուցիչ չափանիշներ են և հիմնականում կախված են նախագծի բնույթից:

- 1) **Իրազորելիության մակարդակը:** Հետազոտողների ունակությունները, ինչպես նաև առաջարկվող նախագծի գիտական արժանիքները: Նախագծի իրականացման համար բոլոր մասնակիցների (հայկական և ամերիկյան գիտախմբերի) կողմից նախատեսվող տեխնիկական միջոցների և հնարավորությունների համապատասխանությունը նախագծի իրականացմանը: Նախագծի համակարգման և կառավարման պլանի արժանահավատությունը:

- 2) **Նախագծի գիտական արժանիքները:** Հավանականությունը, որ նախագծի իրականացումը կարող է բերել նոր գիտելիքների կամ նորարարական առաջարկությունների, որոնք էական նշանակություն կունենան գիտական և ճարտարագիտական մեկ կամ մի քանի բնագավառների համար:
- 3) **Կիրառական արժանիքները:** Հավանականությունը, որ նախագծի իրականացումը հիմք կհանդիսանա նոր կամ բարելավված տեխնոլոգիաների մշակման համար, ինչպես նաև շուկայում այն կունենա առևտրային արժեք կամ կնպաստի սոցիալական խնդիրների լուծմանը, հատկապես Հայաստանում:
- 4) **Նախկինում ռազմական բնույթի հետազոտությունների ոլորտում աշխատող գիտաշխատողների անցումը քաղաքացիական բնույթի հետազոտությունների բնագավառ:** Այս նախագծի իրականացման միջոցով, նախկինում ռազմական հետազոտությունների բնագավառում ներգրավված գիտաշխատողների անցումը՝ լրիվ դրույքով ընդգրկվածությունը, քաղաքացիական բնույթի հետազոտությունների բնագավառ:
- 5) **Փոխշահավետությունը:** Հավանականությունը, որ նախագծի իրականացումը փոխշահավետ է լինելու Հայաստանից ու ԱՄՆ-ից, ինչպես նաև այլ մասնակիցների համար՝ գիտական և տեխնիկական տեսակետից:
- 6) **Նախագծի ազդեցությունը գիտական և ճարտարագիտական ենթակառուցվածքի վրա:** Գիտա-տեխնիկական ընդհանուր ենթակառուցվածքի բարելավման հավանականությունը՝ ներառյալ կրթությունը և անձնակազմը (օրինակ, երիտասարդ գիտաշխատողների և ուսանողների մասնակցությունը՝ արտասահմանից վերադարձածների, ինչպես նաև համալսարանական և կին գիտաշխատողների մասնակցությունը), հետազոտական աշխատակազմի բնակության վայրի աշխարհագրական բաշխվածությունը և կազմակերպությունների կողմից սարքավորումների ընդհանուր օգտագործման հնարավորությունը:

Թ. Հայտի պարունակությունը: Յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի ստորև նշված բոլոր բաղադրիչները: Փորձաքննության փուլ կանցնեն միայն այն հայտերը, որոնք կհամապատասխանեն այս պահանջներին: Բոլոր հայտերը պետք է տպվեն 1 տողամեջ հեռավորությամբ, 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, բոլոր էջերը, ներառյալ ձևերը, պետք է համարակալվեն վերևի աջ անկյունում: Հայտերը պետք է տպված լինեն տառերի առնվազն 10-րդ չափսով:

**ԿԱՐԵՎՈՐ Է: Հայտը չպետք է գերազանցի 22 էջը՝ բոլոր ձևերը ներառյալ:
22 էջը գերազանցող բոլոր հայտերը համարվելու են անվավեր:**

- 1) **Տիտղոսաթերթ («Ձև-Ա»):** Տիտղոսաթերթը պետք է ներառի հիմնական տեղեկությունները նախագծի, հայկական գիտախմբի ղեկավարի, հայկական կազմակերպության և նրա տնօրենի, ամերիկյան գիտախմբի ղեկավարի, ամերիկյան կազմակերպության ներկայացուցիչի վերաբերյալ: Այս տեղեկությունների մեծ մասը պետք է ներկայացվեն նաև հայտը էլեկտրոնային ճանապարհով ՔՀՄՀ ուղարկելիս:
 - ա) Հայկական գիտախմբի ղեկավարը չի կարող միևնույն ժամանակ նախագծում հանդիսանալ կազմակերպության տնօրեն (ներկայացուցիչը), որը պետք է ապահովի նախագծի ժամանակին և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:
 - բ) ԱՄՆ կազմակերպության ներկայացուցիչը պետք է պաշտոնապես օրինական լիազորություն ունենա, որ ապահովի ամերիկյան կազմակերպության համագործակցությունը նախագծի հետ և ՔՀՄՀ-ի հետ բանակցություններ վարի դրամաշնորհի ֆինանսական բոլոր հարցերի շուրջ:
 - գ) Ամերիկյան գիտախմբի ղեկավարը չի կարող միևնույն ժամանակ նախագծում հանդիսանալ ամերիկյան համապատասխան կազմակերպության ներկայացուցիչ:
- 2) **Ամփոփագիր:** Մեկ համառոտ պարբերությամբ ամփոփ ներկայացնել նախագծի բոլոր կարևոր դրույթները՝ կենտրոնանալով նպատակների, մեթոդների և ակնկալվող արդյունքների վրա:
- 3) **Նախագծի նկարագրություն (առավելագույնը 6-8 էջ՝ ներառյալ բոլոր գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները կամ մեջբերվող հղումները):** Նկարագրել՝

ա) Նախագծի նպատակները(խնդրի դրվածքը), օգտագործվող մոտեցումները և հաջողության չափորոշիչները;

բ) Ինչպես են հայկական և ամերիկյան գիտախմբերի անհատական և միավորված հմտությունները նպաստելու նախագծի իրականացմանը, և նախկինում ինչ նմանատիպ աշխատանք է կատարվել գիտախմբի անդամների կողմից (կարող են նկարագրվել ինչպես նախկինում ՔՀՄՀ-ի կամ ԳՄՍՄՀ-ի դրամաշնորհների շրջանակներում իրականացված նախագծերը, այնպես էլ համատեղ այլ դրամաշնորհներ, եթե այդպիսիք կան);

գ) Նախագծից ակնկալվող արդյունքները, և ինչպես են դրանք առնչվում Բաժին (IV)(Ը)-ում թվարկված ՔՀՄՀ/ԳՄՍՄՀ-ի գնահատման չափանիշների հետ;

դ) Նախագծում օգտագործվող սարքավորումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՔՀՄՀ/ԳՄՍՄՀ-ից ֆինանսական աջակցության շրջանակում պահանջվող սարքավորման բոլոր հայտերի հիմնավորման վրա:

ե) Ինչպես են նախագծի հայ և ամերիկյան կողմերի ղեկավարները համակարգելու նախագծի իրականացումը և պարբերաբար գնահատելու ծրագրի առաջընթացը: Յուրաքանչյուր նախագիծ պետք է ենթադրի հայ և ամերիկյան գիտախմբերի միջև լուրջ և կայուն համագործակցություն: Մույն նախագծի շրջանակներում ֆինանսավորվող բոլոր միջազգային ճանապարհորդությունները պետք է հիմնավորվեն դրանց նպատակի և տևողության տեսակետից:

զ) Այն դիմորդները, որոնք հայտեր են ներկայացնում ՔՀՄՀ-ի կամ ԳՄՍՄՀ-ի նախորդ դրամաշնորհի հիման վրա, նախագծի նկարագրման մասում պետք է ունենան հստակ նշված առանձին բաժին, որը կպարունակի հետևյալ տեղեկությունները՝

- ՔՀՄՀ/ԳՄՍՄՀ-ի նախորդ դրամաշնորհի արդյունքում ստացված նվաճումների ամփոփում, և ինչպես են նոր նախագծի նպատակները կապված լինելու անցյալում ձեռքբերված արդյունքների հետ;
- Նախորդ դրամաշնորհից հետո նախագծի աշխատակազմում կամ ենթապայմանագրային համագործակցության համակարգում կատարված փոփոխությունները;
- Բացատրություն, թե ինչպես է նախորդ դրամաշնորհի շրջանակներում ձեռքբերված սարքավորումը նպաստելու նոր նախագծի իրականացմանը:
- Նախկին կամ ներկայումս ընթացքի մեջ գտնվող դրամաշնորհների արդյունք հանդիսացող հրապարակումների և համապատասխան թեմայով գիտաժողովների արժեքավոր թեզիսների ու այլ տեսակի նյութերի ցանկը՝ ներառյալ նախորդ դրամաշնորհների համար ստացված լրացուցիչ ֆինանսավորումը:

4) Ամերիկյան և հայ գիտախմբերի ղեկավարների համառոտ կենսագրությունները: Հայտը պետք է պարունակի նախագծի երկու ղեկավարներից յուրաքանչյուրի համառոտ կենսագրությունը (CV)՝ առավելագույնը մեկ էջ ծավալով, նշելով ղեկավարի անունը, պաշտոնը, կրթությունը, այն կազմակերպությունները, որտեղ աշխատել և աշխատում է՝ համապատասխան տարեթվերով, նեղ մասնագիտական բնագավառը, ինչպես նաև առաջարկվող նախագծի հետ առնչվող առնվազն հինգ (5) հրապարակումների ցանկը:

5) Տվյալներ հայ և ամերիկյան գիտախմբերի մասնակիցների վերաբերյալ («Ձև-Բ»): Այս ձևը պետք է լրացվի հայ և ամերիկյան գիտախմբերի բոլոր անդամների համար՝ բացի ղեկավարներից: Խնդրում ենք անհրաժեշտության դեպքում բազմացնել այս էջը այնքան, որքան անհրաժեշտ կլինի նախագծի բոլոր մասնակիցների մասին տեղեկություններ ներկայացնելու համար՝ ներառյալ գիտաշխատողներն ու ճարտարագետները, գիտական և տեխնիկական աջակցության աշխատակազմը, ուսանողներն ու ասպիրանտները, վարչական աշխատակիցները, ինչպես նաև ենթապայմանագր(եր)ի մասնակիցները: «Ձև-Բ»-ի համապատասխան բաժնում յուրաքանչյուր հայ և ամերիկյան մասնակցի համար պետք է ներկայացված լինի համառոտ կենսագրություն, բացի նախագծի ղեկավարներից: Յուրաքանչյուր մասնակցի համար ներկայացվող կենսագրական տվյալների ծավալը չպետք է գերազանցի կես էջը և պետք է պարունակի համառոտ տեղեկություններ մասնակցի կրթության, նախկինում և ներկայումս ունեցած աշխատանքային փորձի՝ նշելով համապատասխան կազմակերպությունները և տարեթվերը, նեղ մաս-

նագիտացման բնագավառը և նախագծի հետ որևէ կերպ առնչվող վերջին գիտական հրապարակումների ցանկը:

ՆՇՈՒՄ. Ամերիկյան գիտախմբի մասնակիցներից չի պահանջվում տվյալներ ներկայացնել իրենց ծննդյան տարեթվի վերաբերյալ:

- 6) **Բյուջե («Ձև-Գ»):** Ներկայացված «Ձև-Գ»-ում պարունակվող տեղեկությունների հիման վրա պետք է ներկայացնել նախագծի բյուջեն: Ձև-Գ-ն պետք է ամբողջությամբ լրացվի: Դիմորդները պետք է ներկայացնեն մեկ «Ձև-Գ» դրամաշնորհի լրիվ ժամանակահատվածի համար: Բյուջեի «Ձև-Գ»-ում ներկայացվելիք տեղեկությունների համար դիմորդները պետք է ծանոթանան Հավելված 3-ում շարադրված բյուջե կազմելու ցուցումներին:
- 7) **Բյուջեի մեկնաբանում (հիմնավորում):** Առանձին թերթի վրա պետք է բացատրվեն բյուջեի բոլոր կետերը: Էջի վրա պետք է հստակ նշված լինի «Բյուջեի մեկնաբանություն» վերնագիրը: Շատ կարևոր է, որ գործուղման կամ նյութերի և ծառայությունների համար անհրաժեշտ բոլոր ծախսերը բացատրվեն և հիմնավորվեն: Բյուջեի մեկնաբանման մեջ ներկայացվելիք տեղեկությունների համար դիմորդները պետք է ծանոթանան Հավելված 3-ում շարադրված բյուջե կազմելու ցուցումների «Թույլատրելի ծախսեր» կետի հետ (Բաժին V):
- 8) **Այլ աղբյուրներից ստացվող աջակցություն («Ձև-Դ»):** Նախագծի երկու ղեկավարները պետք է լրացնեն այլ աղբյուրներից ստացվող աջակցության ձև՝ թվարկելով ներ-կայումս ստացվող և ապագայում ակնկալվող ֆինանսական աջակցության աղբյուրները, բացի բյուջեի «Ներդրումներ» բաժնում նշվածներից: Այս ձևը լրացուցիչ օգտա-կար տեղեկություններ է տրամադրում փորձագետների համար և ամենևնի չի ազդում ֆինանսավորում ստանալու հնարավորությունների վրա: Այն դիմորդները, որոնք ԱՄՆ Կառավարության կողմից դրամաշնորհների են արժանացել (օրինակ՝ Առողջապահության Ազգային Ինստիտուտից (NIH) կամ Գիտության Ազգային Հիմնադրամից (NSF)), պետք է հստակ նշեն ստացված ֆինանսական աջակցությունը՝ համապատասխան դրամաշնորհների համարներով և տևողությամբ: Ֆինանսական աջակցության այլ աղբյուրների բացակայության դեպքում այս էջի վերևում պետք է գրվի «չկա»: Եթե այս հայտը ներկայացվել է այլ կազմակերպությանը, այդ մասին պետք է հստակ նշված լինի «Ձև -Դ»-ում:

Ստորև ներկայացված տեղեկությունները պահանջվում են **ՄԻԱՅՆ** այն դիմորդներից, որոնք ներկայացնում են **ամերիկյան առևտրային կազմակերպություններ**: Այդ տեղեկությունները պետք է ներկայացվեն հայտը էլեկտրոնային ճանապարհով ներկայաց-նելու ժամանակ: Հայտը էլեկտրոնային ճանապարհով ներկայացնելիս դիմորդները պետք է հաստատեն, որ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ներակայացվել են: Դի-մորդներից պահանջվելու է այդ նյութերը առանձին փաստաթղթով ներկայացնել՝ ի լրումն հայտին: **Այս լրացուցիչ տեղեկությունները չներկայացնելու դեպքում հայտը կարող է համարվել անվավեր կամ հետաձգման ենթակա լինել:**

Ամերիկյան առևտրային կազմակերպության կողմից ներդրման երաշխավորագիր՝ նամակ: Հայտի հետ պետք է ներկայացվի ամերիկյան առևտրային կազմակերպության կողմից ներդրում կատարելու մտադրությունը հաստատող նամակ: Այդ նամա-կի մեջ պետք է հստակ նշվի ամերիկյան առևտրային ակզմակերպության կողմից կատարվող ներդրման երկու բաղադրիչները՝

- ա) Ամերիկյան առևտրային կազմակերպության կողմից ամերիկյան գիտախմբի բոլոր ծախսերի վճարումը, և
- բ) Հայկական գիտախմբի ծախսերի 10%-ի չափով ամերիկյան առևտրային կազմակերպության կողմից տրամադրվող դրամական կամ նյութական այլ տեսակի աջակցությունը:

Ժ. Ցուցումներ մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններ նախատեսող հայտերի վերաբեր-յալ: ՔՀՄՀ-ն և ԳԱՏԱՀ-ը ենթարկվում են մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններին և մշա-

կումներին վերաբերող ԱՄՆ պետության կողմից սահմանված բոլոր օրենքներին և կանոններին: Համաձայն մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններ նախատեսող հայտերի ֆինանսավորման վերաբերյալ ՔՀՄՀ-ի և ԳԱՏԱՀ-ի կողմից կիրառվող քաղաքականության՝ ինչպես ամերիկյան, այնպես էլ հայկական կողմի ղեկավարները և նրանց համապատասխան կազմակերպությունները պետք է հաստատեն, որ՝

- Նրանք ստացել են ԱՄՆ առողջապահության նախարարության և Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների վերահսկման գրասենյակի (OHRP) կողմից գրանցված տվյալ կազմակերպության փորձագետների խորհրդի (IRB) կամ կազմակերպության էթիկայի կոմիտեի (IEC) համաձայնությունը հետազոտությունները իրականացնելու վերաբերյալ (կամ համապատասխան փաստաթուղթ, որը կհաստատի, որ գրավոր համաձայնություն չի պահանջվում);
- Նրանք ստացել են համապատասխան պետական մարմիններից անհրաժեշտ թույլտվությունները (կամ այնպիսի փաստաթուղթ, որը հաստատում է, որ գրավոր թույլտվություն անհրաժեշտ չէ) տվյալ հետազոտությունը իրականացնելու համար, որի մեջ մտնել են նաև նոր տեսակի ղեղերի կամ հետազոտական պատրաստուկների մշակումները նախատեսող հայտերի գրանցումը;
- Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների վերահսկման գրասենյակը նրանց տրամադրել է համադաշնային համապատասխան երաշխավորագիր (FWA), և ամբողջ դրամաշնորհի ընթացքում նախագիծը ենթարկվելու է այդ երաշխավորագրի պայմաններին: Համադաշնային համապատասխան երաշխավորագիրը (FWA), իրենից ներկայացնում է մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների վերահսկմանը ենթարկվելու պարտավորվածություն:
- Նրանք հետազոտությունը իրականացնելու են ըստ Գիտության Ազգային Հիմնադրամի (NSF) կողմից սահմանված “Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների վերահսկում” անվանումով [45 CFR § 690 et seq.] կանոնակարգի;

Եթե հետազոտությունը ունի Մարդու վրա ազդեցություն ունեցող բնույթ, ամերիկյան և հայկական կողմի ղեկավարները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- 1) Նախագծի իրականացման վերաբերյալ IRB-ի կամ IEC-ի գրավոր թույլտվության օրինակները կամ պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որը կհաստատի, որ վերոհիշյալ թույլտվության անհրաժեշտությունը չկա: IRB-ն կամ IEC-ը պետք է գրանցված լինեն ԱՄՆ առողջապահության նախարարության և Մարդկային օրգանիզմի հետ կապված հետազոտությունների վերահսկման գրասենյակի կողմից:
- 2) Համապատասխան պետական մարմիններից ստացված անհրաժեշտ գրավոր թույլտվությունների (կամ այնպիսի փաստաթղթերի, որը հաստատում են, որ գրավոր թույլտվությունը անհրաժեշտ չէ) օրինակները տվյալ հետազոտությունը իրականացնելու համար, որի մեջ կարող է մտնել նաև նոր տեսակի ղեղերի կամ կամ հետազոտական պատրաստուկների մշակումները;
- 3) Հաստատում, որ յուրաքանչյուր կազմակերպությանը ԱՄՆ Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների վերահսկման գրասենյակի կողմից տրամադրվել է համապատասխան համադաշնային երաշխավորագիր (FWA) (<http://www.hhs.gov/ohrp>) և հաստատում, որ ՔՀՄՀ-ի դրամաշնորհի շրջանակներում իրականացվող հետազոտությունը իրականացվելու է FWA-ի բոլոր պայմաններին համապատասխան: Եթե FWA-ն ձեռք չի բերվել, դրա մասին պետք է նշել հայտի մեջ: Եթե հայտը ֆինանսավորման արժանանա, Նախագծի Ղեկավարների կազմակերպությունները պետք է ստանան համապատասխան FWA-ն նախքան ՔՀՄՀ-ի կողմից դրամաշնորհային որևէ պայմանագիր ստորագրելը:

Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններ ենթադրող յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի IRB-ի ամփոփ արձանագրության ձև, որը կարելի է ձեռք բերել ՔՀՄՀ-ի ինտերնետային էջից՝

http://www.crdf.org/AwardsAdministration/human_subjects.html, իր լրացուցիչ փաստաթղթերով հանդերձ): Այս նյութերը, որոնց մեջ հաստատվում է, որ նախագծի շրջանակներում Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտությունների համար թույլտվությունը ստացվել է կամ անհրաժեշտ չէ, պետք է ներկայացվեն հայտը էլեկտրոնային ճանապարհով ուղարկելու ժամանակ՝ հայտի բոլոր մնացած նյութերի հետ միասին, ինչպես նշված է Բաժին (IV)(Թ)-ում:

Հայտը էլեկտրոնային ճանապարհով ներկայացնելու ժամանակ դիմորդները պետք է հաստատեն, որ անհրաժեշտ բոլոր նյութերը ներկայացվել են: Այդ նյութերը պետք է առանձին ներկայացվեն հայտի հետ: Այս լրացուցիչ տեղեկությունները չներկայացնելու դեպքում հայտը կարող է համարվել անվավեր կամ հետաձգվել:

Նախքան ԳՄՍԱՀ-ի կամ ՔՀՄՀ-ի կողմից որևէ դրամաշնորհի պայմանագիր ստորագրելը նախագծի ղեկավարները և նրանց կազմակերպությունները պետք է հաստատումներ ներկայացնեն առ այն, որ նախագծում ներգրավված բոլոր մասնակիցները անցել են «Մարդու վրա ազդեցություն ունեցող» հետազոտությունների վերահսկման համապատասխան դասընթացներ՝ համաձայն վերը բերված բոլոր պայմանների:

Կլինիկական փորձարարկումներ ենթադրող նախագծերի հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար տես **ՔՀՄՀ-ի կողմից սահմանված «Հիմնական պայմանները» և «Մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններ»-ի ֆինանսավորման համար պայմանները՝**

http://www.crdf.org/AwardsAdministration/Forms%20and%20Guidance/human_subjects_rider.pdf

V. Թույլատրելի ծախսեր

ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն չեն ուսումնասիրելու ոչ մի հայտ, որտեղ կհայցվի 30հազ. ԱՄՆ դոլարը գերազանցող գումար: Ծնորիք տրամադրելու դեպքում բյուջեն կարող է վերանայվել ՔՀՄՀ-ի և ԳՄՍԱՀ-ի աշխատակիցների կողմից: Սույն ծրագրի պայմանների համաձայն ԳՄՍԱՀ-ը և ՔՀՄՀ-ն թույլատրելի են համարում հետևյալ ծախսերը՝

1) **Հայկական գիտախմբի ծախսեր:** Հայկական գիտախմբի ծախսերը պետք է կազմեն **ԳՄՍԱՀ-ից և ՔՀՄՀ-ից հայցվող ընդհանուր գումարի առնվազն 80%-ը:** Թույլատրելի ծախսերն են.

a) **Անհատական ֆինանսական աջակցություն (ԱՖԱ):** Անհատական ֆինանսական աջակցությունը սահմանվում է որպես նախագծում յուրաքանչյուր անհատի կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարվող գումար: ՔՀՄՀ-ն և ԳՄՍԱՀ-ը անհատական ֆինանսական աջակցությունը հաշվարկում են յուրաքանչյուր մասնակցի մասնակցության աստիճանի և մասնագիտական մակարդակի հիման վրա: Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող մասնակիցների աշխատանքային ամիսը հաշվարկվում է 22 օրով, իսկ աշխատաքնային օրը՝ 8 աշխատանքային ժամով: Անհատական ֆինանսական աջակցության թույլատրելի ընդհանուր գումարը պետք է հաշվարկվի այնպես, որ այն չգերազանցի նախագծի շրջանակներում աջակցություն ստացող հայկական գիտախմբի մասնակիցների համար միջինում ամսական 330 ԱՄՆ դոլար գումարը: Նախագծի ղեկավարին հատկացվող առավելագույն անհատական ֆինանսական աջակցությունը չպետք է գերազանցի ամսական 450 ԱՄՆ դոլարը, իսկ գիտախմբի մասնակիցներին՝ 350 ԱՄՆ դոլար:

